

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Որքան մոտենում ենք ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների օրվան, մտայնաբար, Հայաստանյան կուսակցություններն ու խմբավորումները ավելի ու ավելի են հստակացնում իրենց շրջանակն ու շրջապատը:

2007-2008 թվականները ինչպես ՀՀ Աժ նախկին խոսնակ Արթուր Բաղդասարյանն էր շեշտում կարևոր թվականներ են Հայաստանի ժողովրդի համար, (մենք կավելացնենք շատ ավելի կարևոր քաղաքական խմբավորումների համար): Այդ իրականությանն ի տես Հայաստանի պետական վերնախավում որոշակի աշխուժություններ է աչքի ընկնում, որոնցից ամենակարևորը գուցե ՀՀ Ազգային անվտանգության և պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի անդամակցելն էր իշխող կուսակցության հիմնական մեծ համարվող «Հայաստանի հանրապետական» կուսակցությանը և անմիջապես նույն կուսակցության ղեկավար կազմում տեղավորվելը:

ՀՀ Ազգային ժողովի հառաջիկա ընտրությունները ոչ միայն իշխող կուսակցության, այլ նաև ընդդիմության մոտ որոշակի աշխուժություն է ստեղծել:

Կամաց-կամաց ժողովրդավարության վերաբերող լոզունգներն ու կարգախոսերը ականջ են խլացնում, սակայն ոչ ոք նրա գործնականացման մասին չի մտածում: Բայց չէ՞ որ պետք է ապացուցել, որ ժողովրդավարության կարգախոսը միայն ծայր հավաքելու համար չէ:

Պարզ է, որ ժողովրդավարությունը միայն ասելով չի հաստատվում: Այն որոշակի հիմքերի պատրաստման կարիքն ունի, որն իհարկե ժամանակ է պահանջում: Դժբախտաբար, մենք հայերս երկխոսության կողմնակից ենք և ժամանակ է հարկավոր մինչ սովորենք երկխոսության մասին: Մենք երկխոսությունից ավելի մենախոսության սիրահարներ ենք: Անգամ նրանք, ովքեր ժողովրդավարության, միասնականության և երկխոսության համակրողներ են գործնականում այլ կերպ են վարվում:

Մենք քաղաքական հասունության, երկխոսության պիտի հասնենք, որպեսզի հակասություններից ավելի ընդհանրությունները աչքի առաջ ունենանք: Հետո մենք միուսին դավաճան, հայրենիքի թշնամի ու ազգադավ չանվանենք, այլ էլքեր փնտրենք իրար մոտենալու համար, համուն երկրի զարգաց-

ման: Այդ նպատակին հասնելու համար պիտի աշխատել և բոլորով համաձայնության գալ ժողովրդավարության շուրջ:

Մենք՝ ազգովի պիտի հասնենք այն բարձրության, որ այլևս ժողովրդավարությունը դուրս դրվի մեր կուսակցությունների օրակարգից և արմատավորվի երկրում: Այնուհետ կուսակցությունները, դաշինքները և կուսակցությունները քիչ թե շատ տարբերությամբ ներկայացնեն իրենց ծրագրերը երկրի կառավարման համար: Որովհետև փաստ է նաև, որ այսօր հայկական ոչ մի կուսակցու-

Քաղաքականությունը մտքի և մշակույթի հիմնադիրը չէ, այլ տեղավորվելով մշակույթի գծած շավիղում, մտքի այգեստանում հասունացած միրգն ու ծաղիկը ներկայացնում է միջազգային շուկային:

թյուն և խմբավորում լուրջ ծրագիր չունի երկրի կառավարման համար: Հայ քաղաքական խմբավորումները, գրեթե բոլորն անխտիր, իրենց նախածրագրման ժամանակաշրջանն են ապրում:

Պիտի հասկանալ, որ լոզունգներից իրաշք սպասելը հիմնարկություն է: Մենք երբեմն մոռանում ենք, որ դատարկ լոզունգներով երկիր չի կառուցվելու և միայն խոսում, (դժբախտաբար նաև միայն մտածում), ենք իշխանությունը տիրանալու մասին: Խնդիրը նրանում է, որ եթե անընդհատ նոր պատմեցներ են գրավում և նույն ժամանակ կարևորություն չեն տալիս թիկունքիդ այդ դեպքում կարող ես հայտնվել աքցանային շրջափակման մեջ: Անընդհատ գրոհը չի կարող ավարտվել հաջողությամբ եթե թիկունքդ ամուր չէ:

Մենք մերթ ընդ մերթ տարվում ենք իշխանատենչությամբ և մեր գործերը կապում «եթեների» հետ, մոռանալով, որ պատմությունը «եթեներով» չի գրվում, այլ «եթեների» մասին մտածելով:

Մարդկային իրավունքների մասին խոսելը լավ է, պայմանով, որ աշխատենք նաև դրանց իրականացման մասին, հակառակ դեպքում մենք զրկվում ենք ավելացրած կլինենք առօրյա ցավերին:

Իհարկե քաղաքականությունից ու քաղաքական այրերից պետք չէ հուսահատվել, սակայն ողջ հույսը նաև

Օրինակելի քայլ «Ամենայն Հայոց»-ը տիտղոս է, որը չի կարելի շռայլորեն բաժանել

Վերջին մեկ տարվա ընթացքում, ինչպես Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակա որոշ թեմերում, Նոր Ջուղայի հայկական եկեղեցիներում ևս սուրբ պատարագի «Հիշենք»-ի բաժնում Արամ Ա կաթողիկոսի անունը հիշելիս նրա անվան կցվում էր «Ամենայն հայոց» տիտղոսը, որը դժգոհության ալիքներ էր առաջացրել այդ համայնքում: Դժգոհանքի այդ ալիքները կարծես ի մի գալով տեղավորվեցին Սպահանի հայոց թեմի Պատգամավորական ժողովի անդամ և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Ազգային ժողովի պատգամավոր պրն. Թաթուլ Օհանյանի, հուլիսի 2-ի, բողոք-գրության մեջ:

«Մի քանի օր առաջ Նոր Ջուղայի եկեղեցիներից մեկում ներկայ գտնեցի հերթական ս. պատարագին: Երբ արարողությունը հասավ «Յիշենք»-ի բաժնին, ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի անուն յիշատակութիւնից յետոյ, հակառակ ցայժմ կիրառւած ընթացքին, Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա-ին, թէ՛ քահանան, և թէ՛ սարկաւազը, անւանեցին «Ամենայն հայոց» Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, որը զարմանք պատճառեց ինձ, որովհետև ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ Մեծի Տանն Կիլիկիոյ թէ՛ կաթողիկոսը, և թէ՛ կաթողիկոսութիւնը



իրենք իրենց «Ամենայն հայոց» չեն անւանել, այլ միայն «կաթողիկոս և կան կաթողիկոսութիւն հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» և երբ այս պարագան պատասխանատուների ուշադրութեան յանձնեցի, ի պատասխան յայտնեցին, որ Ամենայն հայոց նշանակում է Կիլիկեան բոլոր թեմերի հայերի կաթողիկոս և միայն «հայոց» բառը նշելով բաւական չէ այդ ընդհանրութիւնը յայտնել: Տրւած պատասխանը կրկնակի ինձ զարմացրեց, որովհետև եթէ այդպէս է, ուրեմն այսուհետև ոչ թէ պիտի ասել «Սպահանի հայոց թեմ», այլ՝ Սպահանի → 8

Ադրբեջանցիները Ղարաբաղյան հակամարտությանը մվիրված կայք են բացել

«PanARMENIAN.Net», 09.08.06: Մեծ Բրիտանիայում ադրբեջանցիները www.karabakh.co.uk ինտերնետ կայք են բացել՝ մվիրված Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: Այդ մասին հայտնել է «Լոնդոն-Ադրբեջան» կազմակերպության նախագահ Տայլեխ Չեյդարովը: Նրա խոսքերով, կայքում ներկայացված է Լեռնային Ղարաբաղի հակամարտության, Ղարաբաղի պատմության, նրա հռչակավոր անձանց վերաբերյալ ողջ ինֆորմացիան, մեծ քանակությամբ



Ֆոտո և վիդեոնյութեր: «Պետք է ասել, որ հայկական լրբեհն աշխատում են ապրում է Բրիտանիայում ավելի քան հարյուր տարի: Այն դեռ ադրբեջանականից ուժեղ է, բայց վերջին 10-15 տարիների ընթացքում մենք նկատում ենք, որ բրիտանացիների վերաբերմունքը Ադրբեջանի նկատմամբ դեպի լավն է փոխվում: Մեր գեներն ինֆորմացիան է»,- ասել է Տ. Չեյդարովը, ավելացնելով, որ «Լոնդոն-Ադրբեջան» ընկերությունը ադրբեջանա-բրիտանական երիտասարդական կազմակերպության հետ համատեղ նաև իրատարվում է Visions of Azerbaijan in Britain-ը՝ անսագիրը մվիրված Ադրբեջանի քաղաքականությանը, տնտեսությանը, մշակույթին և պատմությանը, հայտնում է «Թերեմը»:



«ԱՄԱՆ-Ն ԱՐԱԲԵԳՎԱՆ ԿԱՌՈՒՅՑ ԳԷ» ՎԱՍՏԱՅՈՒՄ Ե ՊԱՏԱՄԱՆ ՎԱՐԴԻՍԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ... 2



ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԽԵՐՁԱՆՈՒՄ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՏՆՈՒՄ Ե «ՀՋՐԻԼԱՎԻՆ» ... 3



ՎԱՐԴԱՎԱՆՈՒ ՆՈՅՅԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ... 8 ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԷԶ ... 5


ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԽԵՐՈՒՄ ՈՂՆՉԱՑՎԵԼ ԵՆ ՄՈՏ 27 ՎԱՋԱՐ ՎԱՅՎԱԿԱՆ ՎՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Արգամ Այվազյանի «Նախիջևանի վիճակագրական ժառանգությունը. Ազուլի», «Գինեկո Գողթն. պատմա-ազգագրական ակնարկ. լուսանկարչական պատկերագիրը», «Նախիջևանի պատմության վկայախոսությունների պատկերացույց» գրքերի շնորհանդեսը տեղի ունեցավ հուլիսի 13-ին Հայաստանի գրողների միությունում: Հեղինակն այս գրքերում ներկայացրել է ներկայումս Նախիջևանի ինքնավար Հանրապետության տարածքում գտնվող պատմական Հայաստանի Գողթն, Երնջակ, Նախճավան, Շարուր, Ճահուկ-Շահապոնք գավառների պատմությունը, մշակույթը, պատմա-ճարտարապետական հուշարձանները: → 4



ԸՍՏ ՎՈԳԵԲԱՆԻ, ԱՐԻԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆ «ՂԱՐԱԲԱՂԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՎՈՒՅԱԸ»

«ԱԶԳ», 09.08.06: «Անցան տարիները, և Ղարաբաղի կորստի ցավը հետ մեկտեղ սկսեց անհետանալ նաև այն վերադարձնելու հույսը», նման եզրակացություն է եկել Ադրբեջանում Հայտնի Հոգեբան Ազադ Իսազադեն: «Դեկ.ազ» գործակալության փոխանցմամբ, ադրբեջանցի Հոգեբանը գտնում է, որ թեև բոլոր ադրբեջանցիների անհույսությամբ խոսելը զժվար է, եթե վերջինք Ադրբեջանի միջին վիճակագրական ներկայացուցիչն, «ապա անկասկած, Հայերի կողմից տարածքների օկուպացումը լուրջ տրավմա էր մեզ համար»:



Հոգեբան Իսազադեն գտնում է, որ 90-ականների սկզբին ադրբեջանական ժողովուրդը դեռ հույս ուներ միավորելու իր երկրի հետ Ղարաբաղը, և մարդիկ իրենց հույսը կապում էին կամ Ռուսաստանի, կամ Թուրքիայի, կամ Հեյդար Ալիևի՝ իշխանության վերադառնալու հետ: «Հիմնականում մեր ազգը հարմարվում է այս իրավիճակին ու շարունակում է ապրել Ղարաբաղի կորստի ոչ այնքան սուր ցավով», կարծում է Ազադ Իսազադեն:

فروشگاه تکنو پارشن

تکنو پارشن

بورس انواع لوازم بخار، آب، گاز

شیرهای فشار شکن، ترموستاتیک، اطمینان، شیرهای برقی، فلکه های بخار، samson Spirax


شیر آلات PVC، لوزه گیرهای فلزی و لاستیکی، کنترل آلات مکانیکی و الکترونیکی، Sarco

پنوماتیک و لوازم آمونیاکی و کلیه شیر آلات و اتصالات استنلس استیل در آلیاژهای مختلف Honeywell Danfoss

خ خیام شمالی، روبروی پارک شهر، کوچه شهید اکبر روحی، پاساژ ۱۱۰، طبقه اول (بالای همکف)، پلاک ۱ ژوزف - هاملت تلفن: ۳۳۱۱۲۲۵۷ تلفکس: ۳۳۹۲۵۴۳۹

«ԱՍԱԼԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ ԳԵ» ՀԱՍՈՉՎԱԾ Է ՊԱՏՄԱԲԱՆ ՎԱՂԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆ, 7 ՕԳՈՍՏՈՍԻ, ՆՈՅՅԱՆ
ՏԱՊԱՆ: «Ես եկել եմ այն համոզման,
որ միջազգային աշխատակազմում գո-



յուցից չունի. ուստի ինքն ինքն
չի եկել ազգային-ազա-
տագրական շարժումը,
այն կոչել է «աշխատակազ-
մային»։ Այսպիսի հայ-
տարարություն արեց իր
«Չմոռանալ...» գրքի
օգտագործող 7-ի շնորհան-
դեսի ժամանակ պատմա-
կան գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վաղղիմիր Պետրոսյանը։ Նրա

խոսքերով, «աշխատակազմային
համագործակցությունը ու կազմակեր-
պչությունը Ամերիկայի Միացյալ Նահանգ-
ներն են, որոնք սեփական աշխատակա-
զմում բողոքակցություն հայտարարելով
այն ի սկզբանե վերադարձնում են ուրիշներին»։

Ըստ Վ. Պետրոսյանի, «Չմոռա-
նալ...» գրքը գրելիս ինքը փորձել է
պարզել՝ արդյո՞ք Հայ գաղտնի բանա-
կը՝ ԱՍԱԼԱՆ-ն, աշխատակազմային կազ-
մակերպություն է։ Ուսումնասիրելով
ԱՍԱԼԱՆ-ի վերջին երեք տասնամյակի
ներքին գործունեությունը, հեղինակը
եկել է այն համոզման, որ այդ կազմա-
կերպությունը չի կարելի
որակել որպես աշխատակա-
զմային կառույց, քանի որ
Հայ գաղտնի բանակը
ստեղծվել է հայրենասիր-
ական գաղափարախո-
սության հիման վրա և
մղել է ազգային-ազա-
տագրական պայքար։
Ավելին, Վ. Պետրոսյանի
համոզմամբ, ԱՍԱԼԱՆ-ի
գաղափարախոսությունը
կարելի է դնել այսօրվա
պետական արտաքին քաղաքականու-
թյան հիմքում։

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՋԱՏԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՎԱՐՏՎԻ ԸՆԴՍՏՄԵՐԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱ-
ԴԻՈ», 07.07.06: Իրան-Հայաստան
գաղափարի առաջին հատվածի շինա-
րարությունը նախատեսվում է ավար-
տել ընթացիկ տարվա հոկտեմբերին,
«Արմինֆո»-ի թղթակցին հայտնել է
գլխավորապես շրջանակներին
մոտ կանգնած աղբյուրը։



Նա նշել է, որ ինտենսիվ աշխա-
տանքների շնորհիվ հաջողվել է գա-
լիորեն կրճատել գաղափարի առաջին
հատվածի շահագործման ժամկետնե-
րը։ Ավելի վաղ գաղափարի շահագոր-
ծումը նախատեսվում էր 2007թ.
հունվարի 1-ին։

Ինչ վերաբերում է երկրորդ հատվա-
ծին, ապա գործակալության գլու-
ցակցի խոսքով՝ Հայաստանն ակնկա-
լում է այդ հարցի շուրջ Ռուսաստանի
և Իրանի միջև փոխգլխավոր ձեռքբե-
րում։ Ըստ որում, նրանց միջև հիմնա-
կան փորձաքար է հանդիսանում տա-
րանցիկ գաղափարի շինարարության
հնարավորությունը։

ՄԻՆՉ ԼՂԸ ՃԱՆԱՉՈՒՄԸ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ ԽՈՍՔ ԱՆՎԱՄ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ

«PanARMENIAN.Net», 07.07.06:
«Մինչ ԼՂԸ ճանաչումը, մենք չենք
պատրաստվում վերադարձնել տա-
րածքները, որոնք Լեռնային Ղարաբա-
ղի համար որպես անվտանգության
գոտի են ծառայում»,- Ստեփանակեր-
տում կայացած մամուլի ասուլիսի ժա-
մանակ հայտարարել է Լեռնային Ղա-
րաբաղի Հանրապետության պաշտ-
պանության նախարար, գեներալ-լեյ-
տենանտ Սեյրան Օհանյանը։ Սեյրան
Օհանյանը նշել է, որ ղարաբաղյան
կողմը հանդես է գալիս բացառապես
հակամարտության խաղաղ կարգա-
վորման օգտին։ «Ազդեցիկ մեզ
ստիպեց պատերազմել, և մենք պար-
տադրված էինք հարցը ռազմական
ճանապարհով կարգավորել։ Լեռնային
Ղարաբաղի գերակայության տակ
գտնվող տարածքները ինքնապատակ
չեն, դրանք անվտանգության գոտի են
ծառայում Հանրապետության հան-
դեսին կենսագործնություն համար»,-
ընդգծել է նա։



ԼՂԸ պաշտպանության գերատես-
չության ղեկավարն ընդգծել է, որ տա-
րածքների հարցը, ինչպես նաև հա-
կամարտության շրջանում միջազգա-
յին խաղաղապահ կոնտինգենտի տե-
ղակայումը, կարող են դիտարկվել
կարգավորման միայն վերջին փուլում,
հիմնական խնդրի՝ Լեռնային Ղարա-
բաղի իրավական կարգավիճակի որոշ-
ումից հետո։ «Եթե կարգավորման
հիմնական հարցով որոշում չլինի,
ապա տարածքների վերադարձի վե-
րաբերյալ խոսք անգամ լինել չի կա-
րող»,- հայտարարել է Սեյրան Օհան-
յանը։

Խոսելով ռազմական գործողու-
թյունների վերակաման մասին, Ազդե-
ցիկը նախազգահ ռազմատեսչ է հայ-
տարարությունների համատեքստում
նա հայտարարել է, որ ազդեցիկա-
կան կողմը չի ցանկանում պատերազմ
սկսել։ Նրա կարծիքով, ռազմատեսչ
ելույթները ուղղված են հասարակա-
կան կարծիքի ուսումնասիրմանը և
ներքաղաքական նպատակներ են հե-
տապնդում։ Միևնույն ժամանակ, նա-
խարարել է, որ Լեռնային Ղարա-
բաղի Պաշտպանության բանակը արդ-
յունավետ հակամիջոցների ծրագիր
ունի, որոնք ուղղված են հանրապե-
տության պաշտպանությանը։ «Եթե
արտակարգ իրավիճակ առաջանա,
ապա կանքը ցույց կտա՝ ով ինչ է ըն-
դունակ»,- հայտարարել է ԼՂԸ պաշտ-
պանության նախարարը։

Մեկնաբանելով Հայաստանի ԶՈՒ
Գլխավոր շտաբի ղեկավարի առաջար-
կը՝ Ռուսաստանի և Հայաստանի հա-
մատեղ զորավարություններին դա-
րաբաղյան ստորաբաժանումների
մասկանցության վերաբերյալ՝ Սեյրան
Օհանյանը նշել է, որ ԼՂԸ Պաշտպա-
նության բանակը միշտ պատրաստ է
դրանց մասնակցել և ցուցադրել զին-
պատրաստության լավ մակարդակ,
հաղորդում է Դե-Ֆակտոն։

«ՈՒՐԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ» Հայաստանի և Սփյուռքի երեխաների համար

Հայոց Գրքերի ստեղծման 1600-
ամյակի առթիվ Հայաստանյան
ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ Հրատարակչու-
թյունը լույս է ընծայել «Ուրախ Այ-
բուբեն» պատկերազարդ գրքույկը։
Հրատարակչի ներքին հիմնվելով կոմ-
պոզիտոր Արեգ Լուսինյանի և բանաս-
տեղ Նանսեն Միքայելյանի «Երաժշ-
տական Այբբենարան» երգաչափի
վրա, ստեղծել են մանկական գրքար-
վեստի ժամանակակից մի նմուշ, որի
կոչու կազմին ղրվազված է նաև մուլ-
տիմեդիա խտասակավառակ։ Այս գեղե-
ցիկ նախաձեռնության հեղինակը
«Աստղիկ» գրատան տնօրեն Սիրա-
նուշ Ապրեսյանն է։



ՄԻ ԲԱՆԻ ՏՈՂՈՎ...

- Վարդան Օսկանյանը չի բա-
ցառում իր մասնակցությունը մա-
խազահական ընտրություններին։
- Բեյրութում «հայկական կո-
րուստներ» չկան։
- ՀՀ ԱԳՆ ղեկավար. Ներկա
դրությամբ Ղարաբաղյան հարցում
որոշակի անորոշություն կա։
- «Մեծ ութնյակի» անդամները
կոչ են արել Հայաստանին ֆինան-
սական միջոցներ հատկացնել և մի
շարք արդիականացման միջոցա-
ռումներ իրագործել ՀԱԷԿ-ի անվ-
տանգ շահագործումն ապահովե-
լու համար։
- Հայաստանյան բուհերի այս
տարվա դիմորդները ամենաշատը
ձգտում են անգլերենի ուսուցիչ
դասնալ. այդ է վկայում ընդունելու-
թյան մրցույթի անսպասելի և ան-
մախաղեպ պատկերը՝ Պետական
մանկավարժական համալսարանի
անգլերենի ֆակուլտետում կզ-
րանցվի այս տարվա ամենամեծ
մրցույթը՝ 1 անվճար տեղի համար
պետք է պայքարի 28 դիմորդ։
- Հայաստանից Մարդու իրա-
վունքների եվրոպական դատա-
րան է դիմել 650 մարդ։
- Human Rights Association
(IHD) կազմակերպությունը աջակ-
ցություն է հայտնել գրող, Ստամ-
բուլում լույս տեսնող հայկական
թերթի խմբագիր Զրաճու Դիմքին,
որը դատապարտվել էր «թուրք
ազգին վիրավորելու մեջ»։
- Հայաստան ներկրվող սնն-
դամթերքը եմբակա է լինելու պար-
տադիր հայերեն մակնշման։
- Հայաստանում ներկայումս
գործում է 4361 հասարակական
կազմակերպություն, որոնցից, ա-
կայն, վերագրանցված է ընդամենը
579-ը։ Վերջին մի քանի ամիսների
ընթացքում լուծարվել է 60 կազմա-
կերպություն։ Հունիսի 1-ի դրու-
թյամբ Հայաստանում փաստացի
գրանցված է 56 կրոնական կազ-
մակերպություն, որոնցից վերագ-
րանցված է միայն 8-ը։
- Թեհրանը պատրաստ է բա-
նակցություններ վարել իրանական
միջուկային ծրագրի շուրջ, բայց
այդ բանակցությունների նախնա-
կան պայմաններ չի ընդունում։
- Հունիսի 26-ին թուրք հաքերնե-
րը հարձակում են գործել Հայրե-
նազարդության և հիմնավորման
«Երկիր» հասարակական կազմա-
կերպությունների միության համա-
ցանցային կայքի վրա։
- Սեպտեմբերին կկայանա
«Լեռնային Ղարաբաղի ադրբեյ-
ջանցիների» Մեջլիսի նիստը։
- Այս տարվա առաջին կիսամ-
յակում Հայաստան է ժամանել
122.528 զբոսաշրջիկ, նախորդ
տարվա նույն ժամանակաշրջանի
նկատմամբ հավելածի տեմպը 11,6
տոկոս է (109.750 զբոսաշրջիկ)։
- «Պատերազմի սկսման օրից»
հուլիսի 2-ից առայսօր Լիբանա-
նում նահատակվել է ավելի քան
1000 մարդ, 3000 վիրավորվել են,
մեկ միլիոն լիբանանցի գաղթել է
իր բնակության վայրից, քանդվել է
15 000 բնակարան։ 22 օրում Լիբա-
նանի պատճառով է 5 միլիարդ
ԱՄՆ դոլարի վնաս՝ 22 օրում ՀՀ
պետական բյուջեից 5 անգամ մեծ
չափի վնաս», հայտարարեց Գաբ-
րիել Ժերանյան։
- ՌԴ նախագահ Վլադիմիր Պու-
տինի հրամանագրով Ամենայն Հա-
յոց Կաթողիկոս Գարեգին Երկրոր-
դը պարգևատրվել է «Բարեկամու-
թյան» շքանշանով։
- Ադրբեյջանական ոստիկանու-
թյունը խանգարել է հայրուր մահ-
մեղականներից բաղկացած խմբի
բողոքի ցույց անկացնել Բաքում
Իսրայելի դեսպանատան առջև։

ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ՄԵԾ ՄԱՍԸ ՀԱՍՈՉՎԱԾ Է, ՈՐ ԵՐԿԻՐԸ ՄԻՍԱԸ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ Է ԸՆԹԱՆՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», Ռ/Կ.
12.07.06: Հայաստանցիների մեծա-
մասնությունը՝ 55 տոկոսի համոզմամբ,
Հայաստանը սխալ ուղղությամբ է ըն-
թանում։ 32 տոկոսը հակառակ տեսա-
կետն է պաշտպանում, մինչդեռ 13
տոկոսը դեռևս չի կողմնորոշվել կամ
հրաժարվել է հրապարակել իր կարծի-
քը։ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման
գործակալության (USAID) ֆինանսա-
կան օժանդակությունները Baltic Surveys
/ International Republican Institute և
Gallup կազմակերպությունները Հա-
յաստանում անցկացրել են ծավալուն
սոցիոլոգիական հետազոտություն՝
ընկալության ընդամենը տրամադրու-
թյունը պարզելու համար։ Ապրիլի
վերջին - մայիսի սկզբին անցկացված
հարցմանը մասնակցել է 1200 չափա-
հաս Հայաստանցի։



Հայաստանցիներին առավելապես
մտահոգող խնդիրներից է գործազր-
կությունը (43 տոկոս), իսկ կարևորու-
թյամբ վերջին տեղը զբաղեցրել է Հա-
յոց ցեղասպանության ճանաչումը՝ ըն-
դամենը 4 տոկոս։

Հարցվածների 42 տոկոսը կարծում
է, որ վերջին երեք ամսվա ընթացքում
Հայաստանի տնտեսական իրավիճակը
բարելավվել է, իսկ 23 տոկոսի համոզ-
մամբ՝ վատթարացել։ Սակայն, այս
ընդհանուր զարգացումը անմիջակա-
նորեն կապված չէ ընտանիքների ֆի-
նանսական վիճակի փոփոխության
հետ. զրական զարգացումներ արձա-
նագրել է հարցվածների 23, բացասա-
կան՝ 28 տոկոսը։

«Ո՞վ է մեր ժամանակների հերոսը»
հարցին, հարցվածների 14 տոկոսը
պատասխանել է՝ Անդրանիկը։ Հարց-
վածների 10 տոկոսը նախապատու-
թյունը տալիս է Գարեգին Նժդեհին, 9
տոկոսը նշում է Վազգեն Սարգսյանի
անունը, իսկ Տիգրան Մեծը և Կարեն
Դեմիրճյանը հարցվածների 6 տոկոսի
հերոսներն են։

فروشگاه آارات

فروشده لوازم هیدرولیک پنوماتیک
هیدرولیک، پمپ، هیدروموتور، شیر برقی،
فشار شکن، مانومتر پنوماتیک واحد مراقبت، جک،
شیر برقی، رگلاتور، فلو کنترل، پرشر سوئیچ
پخش لوازم اصلی پنوماتیک کاموزی - ایتالیایی

آدرس: سعدي جنوبی، کوچه علیچور،
پاساژ شمس، پلاک ۸

تلفن:
۳۳۹۴۱۸۶۸ - ۳۳۹۷۱۲۷۳

صنایع کادویی پاسارگاد

تولید کننده ی ظروف سیلور
با کارت تضمین یکساله

تلفن: ۷۷۳۴۵۸۱۴ - ۷۷۳۳۶۱۱۷

Բարու-Ջեյհան նավթատարին հակակշիռ՝ Հայաստանի ներքին ռեսուրսները և Սփյուռքի ներուժը

1999թ. նոյեմբերի 18-ին, Ադրբեյջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահները Ստամբուլում ստորագրեցին համաձայնությունների փաթեթ՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղ կառուցելու մասին:
2000թ. հոկտեմբերին նախագծի մասնակից ընկերությունները, «Բրիթիշ Փեթրոլիումի» գլխավորությամբ, Ադրբեյջանի, Վրաստանի և Թուրքիայի կառավարությունների հետ ստորագրեցին նավթամուղի շինարարության ֆինանսավորման մասին համաձայնագիր: Շինարարությունը սկսվեց 2002թ. սեպտեմբերին և ավարտվեց վերջերս: Նավթամուղի երկարությունը 1767 կմ է, որից 443 կմ-ն անցնում է Ադրբեյջանի, 248 կմ-ը՝ Վրաստանի, իսկ 1076 կմ-ը՝ Թուրքիայի տարածքով:

Նավթատարի կառավարությունների հետ ստորագրեցին նավթամուղի շինարարության ֆինանսավորման մասին համաձայնագիր: Շինարարությունը սկսվեց 2002թ. սեպտեմբերին և ավարտվեց վերջերս: Նավթամուղի երկարությունը 1767 կմ է, որից 443 կմ-ն անցնում է Ադրբեյջանի, 248 կմ-ը՝ Վրաստանի, իսկ 1076 կմ-ը՝ Թուրքիայի տարածքով:

որոնք կարող են ունենալ տարբեր պատասխաններ և մեկնաբանություններ: Բայց հստակ է մեկ բան. Հայաստանը դուրս է մղվում տարածաշրջանային ծրագրերից, մեկուսացվում է տնտեսական և քաղաքական առումներով, դառնում անհետաքրքիր երկիր:

Հատկապես ներկայումս, երբ գործարկվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը, և Հայաստանը Ադրբեյջանի տնտեսությունից և զարգացումից ետ չմնալու մարտահրավերի առաջ է կանգնում, ի՞նչ է առաջադրելու, ինչո՞վ է հակակշռելու Հայաստանը այդ նավթամուղին: Առաջիկա տարիներին հավանաբար կյանքի կկոչվեն Հայաստանը շրջանցող այլ ծրագրեր:

Լիսի-Ջեյհանի, Ադրբեյջանի մեծ հնարավորությունների հետ, մենք այլ ռեսուրսներ չունենք, քան իմ նշած երեք ռեսուրսները»,-ընդգծեց արտգործնախարարը:

Անշուշտ, արտգործնախարարի թվարկած ռեսուրսները ճիշտ օգտագործելու դեպքում հնարավոր է հասնել որոշ հաջողությունների միայն, քանի որ ինչքան էլ մարդկային գործունե կարևոր է, բայց առանցքային չէ: Կան շատ ավելի խորքային պատճառներ, ինչպես նշել ենք վերևում՝ հարևանների հետ բարդ հարաբերություններ, աշխարհագրական դիրք և այլն: Եթե մեր հիմնական ռեսուրսներից են քաղաքական և տնտեսական բարեփոխումները, ժողովրդավարական գործընթացները, ապա ինչու՞ է Հայաստանը ժողովրդավարության փոխարեն անշեղորեն գնում դեպի ավտորիտարիզմ, ինչու՞ է ազատ տնտեսության սկզբունքներ որդեգրելով՝ երկրի տնտեսությունը գրավ դնում Ռուսաստանին և մի քանի հայ օլիգարխներին: Եթե Հայաստանը հավատարիմ է քաղաքական բարեփոխումների ուղուն, ինչու՞ են ընտրությունները ամեն անգամ կեղծվում, ընդ որում ընտրությունից ընտրություն կեղծվում են ավելի ակնհայտ և սարսափելի չափերով: 2007թ. սպասվում են խորհրդարանական, իսկ 2008թ.՝ նախագահական ընտրություններ: Այսօր երկրի քաղաքական դաշտում կատարվող իրադարձությունները, օրինակ՝ մի քանի շաբաթվա ընթացքում տասնյակ հազար անդամներով նոր կուսակցությունների ստեղծումը, որը թելադրվում է իշխանական բուրգից, արդյոք խոսում են ժողովրդավարությանը հավատարմության մասին:



երբ՝ Բաքու-Թբիլիսի-Երզրում գազատարը, Կարս-Ախալքալաբ-Թբիլիսի-Բաքու երկաթուղին: Այսինքն մեր երկիրն այլևս գործոն չէ: Սրան գումարվում են նաև հարևանների հետ ունեցած հակասությունները (թե ո՞վ է մեղավոր, բոլորովին այլ խնդիր է): Արևմուտքից Թուրքիայի հետ Հայաստանի սահմանը պատ է, արևելքից Ադրբեյջանի հետ՝ ականապատ:

Մյուս երկու հարևանների հետ հարաբերությունները թեև բնականոն են, սակայն հարավային հարևան Իրանը լուրջ խնդիրներ ունի միջազգային համրության հետ (բացի այդ, նաև աշխարհագրական առումով, իսլամական հանրապետությունը չի կարող դառնալ արտաքին աշխարհին մեզ կապող հուսալի ճանապարհ), իսկ հյուսիսում՝ Վրաստանի տարածքում, վերջանում են Հայաստանի՝ արտաքին աշխարհի հետ կապող մեր ճանապարհները և երկաթուղին (Աբխազիայում):

Ի՞նչ են մտածում մեր երկրի իշխանությունները: 2006թ. հունիսի 14-ին, այս հարցը ուղղեցինք Հայաստանի արտգործնախարարին: Վարդան Օսկանյանը կարծում է, որ Հայաստանը մեծ ռեսուրսներ ունի, և նշեց երեք խումբ՝ ներքին, սփյուռքի և միջազգային: Ներքին ռեսուրս ստեղծվելու արտգործնախարարը նկատի ունի Հայաստանի քաղաքական և տնտեսական բարեփոխումները, ժողովրդավարական գործընթացները:

«Երկրորդ սփյուռքի ռեսուրսն է: Այսօր մենք օգտագործում ենք սփյուռքի ռեսուրսի մեկ-երկու տոկոսը: Ինչու՞, որովհետև կա երկրի նկատմամբ վստահության, չարաշահումների և այլ խնդիրներ»,-ասաց Օսկանյանը: Եթե Հայաստանի ղեկավարությանը հաջողվի ճիշտ և լավագույնս օգտագործել մեր ներքին և սփյուռքի ռեսուրսները, ապա դրան կավելանա երրորդը՝ միջազգային ռեսուրսը: «Այդ պարագայում Հայաստանը դառնալու է ավելի հուսալի գործընկեր, և ներդրումների ավելի մեծ հոսք է լինելու: Իհարկե, մեծ բան արվել է անցնող տարիներին, բայց եթե հարցը կապում ենք Բաքու-Թբիլիսի-Ջեյհանի կառուցման հետ, ապա պարզապես չենք կարողանալ հարկադրաբար հարկադրելու մեր ժողովրդին: Սրան գումարվում են նաև հարևանների հետ ունեցած հակասությունները (թե ո՞վ է մեղավոր, բոլորովին այլ խնդիր է): Արևմուտքից Թուրքիայի հետ Հայաստանի սահմանը պատ է, արևելքից Ադրբեյջանի հետ՝ ականապատ: Մյուս երկու հարևանների հետ հարաբերությունները թեև բնականոն են, սակայն հարավային հարևան Իրանը լուրջ խնդիրներ ունի միջազգային համրության հետ (բացի այդ, նաև աշխարհագրական առումով, իսլամական հանրապետությունը չի կարող դառնալ արտաքին աշխարհին մեզ կապող հուսալի ճանապարհ), իսկ հյուսիսում՝ Վրաստանի տարածքում, վերջանում են Հայաստանի՝ արտաքին աշխարհի հետ կապող մեր ճանապարհները և երկաթուղին (Աբխազիայում):

Երկրորդ սփյուռքի ռեսուրսը: 1998թ., երբ տեղի ունեցավ իշխանափոխություն, ներկաները նախկիններին, ի թիվս այլ բաների, մեղադրում էին սփյուռքի ներուժը ոչ ճիշտ օգտագործելու մեջ: Իշխանափոխությունից հետո անցել է ավելի քան 8 տարի, ավելացել են սփյուռքից ակնկալվող օգնությունները: Ութուկես տարի առաջ ասվում էր, որ սփյուռքից հնարավոր է ակնկալել տարեկան մինչև 500 մլն դոլար, այլ ոչ 10 մլն: Ի՞նչն է խանգարել, որ այսօր էլ խոստացված 500 մլն-ի փոխարեն այդ օգնությունը շարունակվում է կազմել մի քանի տասնյակ մլն: Ել չենք խոսում հայտնի դեպքերի մասին, երբ սփյուռքահայ բարերարներին, ինչպես, օրինակ, Նաջարյան ամուսնուհիներին, ուղղակիորեն խաբել են:

Եւ վերջապես երրորդը՝ միջազգային ռեսուրսը: Եթե 1990-ականների սկզբներին Հայաստանը հավակնում օր դառնալ «ժողովրդավարության օազիսը» կովկասյան տարածաշրջանում և ակնհայտորեն առաջ էր անցել իր անմիջական 4 հարևաններից առնվազն երեքից Ադրբեյջանից, Վրաստանից և Իրանից, ապա այսօր, երբ կարգում են միջազգային կազմակերպությունների տարեկան գեկույցները, պարզ է դառնում, որ օազիսը տարեցտարի վերանում է: Այսօր անգամ փորձ է արվում Հայաստանը համեմատել Ադրբեյջանի հետ, որտեղ հաստատվել են Առաջին համաշխարհային պատերազմի նման կարգեր:

Թաթուլ Հակոբյան «ՀԵՏԲ»

Իսրայել-լիբանան հակամարտության դասերը

Շատ ու Շատ լուրեր, հոգվածներ և վերլուծություններ գրվեցին Իսրայել-Հզորլահի հակամարտության և նրա հետ առնչվող անցուդարձերի մասին: Նպատակ չունենալով այդ շարանը էլ ավելի երկարացնել, միայն մի քանի կետեր պիտի հիշատակենք պատմությունից դաս քաղելու համար:

1-Ռախլյալ «փոքր ատուն» կարող է հարթել տեխնիկայով հարուստ մեծաքանակ թշնամուն:

2-Տարւնները հավերժական չեն: Իսրայել-Հզորլահի պատերազմը եթե ճիշտ կարգի էր հարթվում, ապա քանակական բերած չլինի Լիբանանի համար, հենց այնքանը բավարար է, որ Իսրայելի անհաղթելիության տաբուսն փշրեց: Դա ապագա հնարավոր պատերազմում, (որի հավանականությունը մինչև Պաղեստինի հարցի արդար լուծումը միշտ էլ առկա է), կհզորացնի արաբական ճակատը:

3-Միջազգային քաղաքականության թատերաբեմում արդարությանը որևէ դեր չի հատկացվում: «Աշխարհի տերերը» իրենց շահերից ելած երկակի քաղաքականություն են ճշտում տարբեր երկրների և ժողովուրդների նկատմամբ, մեկ տեղ պաշտպանելով ազգերի ինքնորոշման իրավունքից, այլ տեղ՝ սահմանների անձեռնմխելիությունից: հիշենք Հարավային Կովկասի համագոտրեն կտորկտոր անելու պարագան և Լեռնային Ղարաբաղի հարցը:



4-Պատերազմի սկիզբն ու ձևը, նրանում կիրառվող զենքերը, և անգամ «խաղաղության» պայմանագրի հողվածներն ու ժամկետը միայն հակամարտող կողմերը չեն ճշտում: Փաստորեն կրակը բռնկվում և կրակմարը հաստատվում է առձակատող կողմերի կամքից անկախ:

5-Մերօրյա պատերազմների հետապնդած նպատակները չեն սահմանափակվում հակամարտող կողմերի հողային, քաղաքական և նյութա-տնտեսական շահերի ծիրում:

Իսրայելի ձեռքով իրականացվող, Ամերիկայի ծրագրած, այս պատերազմը ոչ միայն միտում էր ճնշել Լիբանանում ու պաղեստինյան պայքարը, այլ նաև ողջ արաբական աշխարհը, մանավանդ Սիրիան: Եվ իհարկե, գուցե և իմնականում, Իրանը: Այստեղ թեև մակերեսում Իսրայելն ու Լիբանանը կան ավելի ճիշտ Իսրայելն ու Հզորլահին էին հակամարտում, սակայն իրականում այն տարածաշրջանի անկախ ուժերի և սիրահան-ամերիկյան ճակատի կոչվել էր: Ուստի մանկամտություն կլինի այս պատերազմի նպատակներն ու հետևանքները միայն Լիբանանում, Պաղեստինում և Իսրայելում փնտրելը, քանզի Ամերիկայի կողմից հետապնդվող «Աշխարհի նոր կարգ ու սարքի» հաստատման և աշխարհակալման ծրագրում Միջին Արևելքը ամենանպատակալից տարածքն է:

«Մեծ Մերձավոր Արևելք» ստեղծելու, համար դեռ շատ անմեղ արյուններ է թափվելու՝ մերթ ամերիկացու, մերթ Իսրայելի և երբեմն էլ թուրքի ձեռնարկ...

ԻՆՏԱՍ ԱԼԻԵՎ. «ՄԵՆՔ ԷԼ ՄԵՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՂԸ՝ ԵՐԻՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՆՔ ՈՒՋՈՒՄ ԲՈՆԱԶԱՎԹԵԼ»

«Հայաստանն ուզում է բռնազավթել Լեռնային Ղարաբաղը, մենք էլ Ազրբեջանի պատմական հողը՝ Էրիվանի խանությունն ենք ուզում բռնազավթել: Մենք կարող ենք դա ցանկանալ, բայց այսօր դա իրական չէ», - ասել է Ազրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը:



Ի պատասխան պատերազմի վեր-ըսկսման Հնարավորության մասին հարցին, Ազրբեջանի նախագահը կար-ծիք է հայտնել. - «Մենք պետք է պատ-րաստ լինենք ցանկացած տարբերակի: Ազրբեջանի աճող տնտեսական ներու-ժը, ռազմական հզորությունը, դիրքը տարածաշրջանում, մեր կարևորու-թյունը տարածաշրջանի և աշխարհի համար, առաջնորդում են մեզ դեպի գերակա դիրքեր»:

«Ջուճհուրիեթ» թուրքական թեր-թիվն տված հարցազրույցում Ալիևը խոստովանել է, որ «Հայաստանը և Ազրբեջանը շատ հեռու են համաձայ-նությունից»: Խոսելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների առաջարկ-ների մասին՝ Ազրբեջանի նախագահն ասել է. - «Ազրբեջանցիները պետք է վերադառնան Ղարաբաղ՝ դա է պայ-մանը: Դրանից հետո, քանի որ Ղարա-բաղը Ազրբեջանի անքակտելի մասն է, Ղարաբաղի համայնքները և Ազրբեջա-նը կարող են քննարկել Ղարաբաղի սպազա կարգավիճակը: Հետագայում կտեսնենք, թե որքան ժամանակ կպա-հանջվի բանակցությունների հա-մար»:

«Հայերը անարդար պահանջներ են ներկայացնում նաև Թուրքիային: Ոչ մի ցեղասպանություն չի եղել: Հակա-ռուսական քաղաքականությունը սպանել են թուրքերին, ազրբեջանցի-ներին և կոտորել նրանց», - հայտարա-րել է Ազրբեջանի նախագահը:

Մեկնաբանելով Ղարաբաղի նախա-գահի խոսքերը, թե Ղարաբաղը չի մի-անալու ոչ Հայաստանին, ոչ Ազրբեջա-նին՝ Իլհամ Ալիևն ասել է. - «Ես նրա խոսքերին որևէ նշանակություն չեմ

«ԻՆՁ ԱՆՀԱՆԳՍԱՑՆՈՒՄ Ե ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԶՃԱՆԱԶԵԼՈՒ ԱՄ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

ՎԱՇԻՆԳՏՈՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի Լուիզիանա նահանգի «Դեյլի քոմենթ» թերթը և ամերիկյան մի շարք այլ պարբերականներ հրատարակել են Սե-նատի արտաքին հարաբերությունների Հանձնաժողովի անդամ Նորմ Քոլմանի խոստովանումը, թե դեմ է քվեարկելու նա-խագահ Բուշի ներկայացրած թեկնա-ծուին՝ Ռիչարդ Հոլլանդին Հայաստա-նում Միացյալ Նահանգների դեսպան նշանակելու առաջարկին: «Ինձ շարու-նակում է անհանգստացնել պատմա-կան իրողությունը չճանաչելու մեր քաղաքականությունը: Բուշի վարչա-կազմը ընդունում է, որ թուրքական զորքերը 1915 թվականից սկսած սպա-նել և արտաքսել են մեկուկես միլիոն հայ, սակայն այդ մասին խոսելիս բաց է թողնում ցեղասպանություն բառը», ասել է սենատոր Քոլմանը:



Ճայնել է հետաձգել լուսմանը, սակայն չի նշել, թե ինչպես է քվեարկելու: «Վարչակազմը պետք է փոխի իր քա-ղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Ցավոք, Հոլլանդը հայտն-վել է այս իրադրության կիզակետում, և ես ավելին եմ խոսելու այս ամենի մասին, երբ սեպտեմբերին դրվի այս պաշտոնում Հոլլանդին Հաստատելու հարցը», ասել է Բ. Բոքսերը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՐԱՐՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2006թ. Հունվար-հուլիսին 1,9,2-ում ծնվել է 1203 երեխա՝ 2005թ. Հուն-վար-հուլիսի 1169 երեխայի դիմաց, մահացել է 749 մարդ՝ 2005թ. 766 մարդու դիմաց: 2006թ. Հունվար-հու-լիսին բնակչության բնական աճը կազ-մել է 454 մարդ և 2005թ. Հունվար-հուլիսի համեմատ աճել է 51 մարդով կամ 12,7 տոկոսով: 2006թ. Հուն-վար-հուլիսին գրանցված ամուսնու-թյունների թիվը կազմել է 398 ամուս-նություն՝ 2005թ. Հունվար-հուլիսի՝ 354-ի դիմաց, իսկ ամուսնալուծու-թյունների թիվը՝ 64՝ մնալով 2005 թ. Հունվար-հուլիսի մակարդակին: 2006թ. Հունվար-հուլիսին 1,9,2-ում



պաշտոնապես հաշվառված երեխաների թվաքանակը (առանց ներքին միգրա-ցիայի) կազմել է 534 մարդ, իսկ մեկ-նողների թվաքանակը՝ 643 մարդ: Մե-խանիկական նվազումը կազմել է 109 մարդ:

1 → Նախիջևանի տարածքում, ըստ Ա. Այվազյանի, Ազրբեջանի իշխանու-թյունների հրահանգով ավերվել են մոտ 27 հազար հայկական մեծ ու փոքր հուշարձաններ, եկեղեցիներ ու վանքեր: Նրա կարծիքով, Հայոց ցե-ղասպանության տարիներին Թուրքի-այի տարածքում հայկական մշակու-թյան արժեքների կործանումից հե-

տո, Նախիջևանում հուշարձանների ոչնչացումը մեր մշակույթում 2-րդ նման դեպքն է: Ըստ հեղինակի, այսօր Նախիջևանի տարածքում հայկական մշակույթի ուսումնասիրության առումով գրեթե ոչինչ չի մնացել: Նրա խոսքերով, հայկական հուշարձանների, վանքե-րի, եկեղեցիների փոխարեն դատարկ տարածքներ են:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՆԱԽԱՁԵՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑՆՈՒՄ Ե «ՇՋՐՈՒԼԼԱՇԻՆ»

Դ րա ընդլայնում է տարածաշր-ջանում նախաձեռնությունը տիրանալու Իրանի և Սիրիայի հնա-րավորությունները

իրենց ատում է: «Չզբոլլահի» ոչն-չացման անհնարինությունը մասին Իս-րայելի վարչապետի հայտարարու-թյունը ոչ այլ ինչ է, քան առաջադ-րանքի ծախսողման խոստովանու-

ոչ թե վերոհիշյալ կազմակերպու-նը, այլ հենց իսրայելական բանակը: Այս պայմաններում նախաձեռնու-թյունը Լիբանանում ամբողջությամբ անցնում է «Չզբոլլահին»:

Օգոստոսի 7-ին, երբ 27-րդ օրն էր թևակոխում իսրայելական ազ-րեսիան Լիբանանում, սպանված լիբանանցիների թիվը հասել է 1000-ի, որոնց գերակշռող մասը երեխաներ են և կանայք: Այդ ըն-թացքում «Չզբոլլահի» հետ կրիվներում և հրթիռակոծության հետևանքով սպանվել էին 103 իսրայելացիներ, որոնցից 63-ը զինծառայողներ են: Իսրայելա-կան բանակը հրապարակել էր այդ զինծառայողներից 59-ի անունները:



թյուն:

Այսինքն՝ Իսրայելի կորուստների մասին տվյալների աղբյուրը իսրայե-լական բանակն է, ինչը ենթադրում է դրանց իրական պատկերի թողար-կումը: Սակայն, անկախ թողարկում-ներից, ակնհայտ է դառնում Իսրայելի ընկրկումը «Չզբոլլահի» առջև: Այս հանգամանքը հավասա-րակշռությունից հանում է վար-չապետ Էհուդ Օլմերտի գլխա-վորությամբ Իսրայելի ղեկա-վարներից, իսկ դա ստիպում է միջազգային ուժերին ակտի-վացնել Լիբանանի ճգնաժամի այսպես կոչված հաղթահարման ջանքերը:

Չարքը սակայն սուկ առաջադրա-նք է, այլ ռազմականի հետ նաև քա-ղաքական նախաձեռնությունը Լիբա-նանում ստանալը: «Չզբոլլահի» առ-ջև իսրայելական բանակի ընկրկումը,



նախաձեռնությունը:

Չավասարակշռությունից Իս-րայելի ղեկավարության դուրս գալու մասին հստակ պատկե-րացում կազմելու համար կարե-լի է անդրադառնալ վարչապետ Օլ-մերտի գերմանական թերթում հրա-պարակված հարցազրույցին: Օգոս-տոսի 6-ին, երբ «Չզբոլլահի» գրոհա-յինները հակահարված էին տալիս իսրայելական ազրեսիային, սպանե-լով 12 իսրայելցի զինծառայողի, Օլ-մերտը վերստին պատմում է Լիբա-նանում այս կազմակերպության են-թակառույցների ոչնչացման հեթա-թը: Նա նույնիսկ ցանկատեսությամբ հետևություն է անում, թե «Չզբոլլա-հը» կորցրել է իր դիրքերը Լիբանա-նում, այնուհետև մոռանալով հետև-ության մասին, ստիպված խոստովա-նում է. «Որքան էլ խոցելի հարված ստանա, անհնար է ոչնչացնել ահա-բեկչական այս կազմակերպույա-նը»:

Ինչ վերաբերում է լիբանանյան ճգնաժամի այսպես կոչված հաղթահարման հարցում միջազգային ուժերի ակտիվացմանը, ապա դա էլ պետք է պայմանավորել ստեղծված խիստ անբարենպաստ իրավիճակից Իսրայելի դուրս բերելու վերջիններիս: Դեռևս այդ շահագրգռություններն են պատճառը, որ միջազգային ուժերի ակտիվացումը, որպես կանոն, նպատակաճանդված է լինում ոչ թե Լիբանանից Իսրայելի գործերի դուրս բերմանը, այլ «Չզբոլլահի» հաղթարշավի կասեցմանը:

Մինչդեռ նույն Օլմերտը Իսրայելի ազրեսիան Լիբանանում պայմանա-վորում էր «Չզբոլլահի» ոչնչացման առաջադրանքով և բազմիցս հայտա-արում կառեսիան մինչև առաջադ-րանքի կատարումը շարունակելու իսրայելական բանակի վճռականու-թյան մասին, և չէր մոռանում զգուշ-ացնել, թե սպանելու են բոլորին, ով

առավել ևս դրա հրապարակավ հաս-տատումը վերջինից ոչնչացման անհ-նարինության մասին Օլմերտի հայ-տարարությամբ ցույց է տալիս, որ Լիբանանում իր դիրքերը կորցնում է

ԱՂԻԲԵՋԱՆԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ԵՎԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՍՆԱԿԱՆ ԱԳՐԵՍՈՐՆ ԵՐ

PanARMENIAN.Net», 26.07.06: Ղարաբաղի հայերն իրավունք ունեն որոշելու իրենց ապագան: Այդ մասին երևանում հայտարարել է Մեծ Բրի-տանիայի լորդերի պալատի փոխխոս-նակ, բարոնուհի Քերոլայն Քոկլար: Նրա խոսքերով, Ազրբեջանը դարա-բաղյան հակամարտության հիմնական ազրեսորն էր և լուրջ հանցագործու-թյուններ է կատարել մարդու իրա-վունքների դեմ, հայերի հանդեպ էթ-



նիկ գտում անցկացնելով Ղարաբա-ղում: «Ես չեմ կարող խորհուրդ տալ, թե ինչ անել, ժողովուրդն ինքը պետք է որոշի, թե ինչն է իր համար ամենա-կարևորը և ես հավանություն եմ տա-լիս ցանկացած գործողության, որը կբերի դարաբաղյան հակամարտու-թյան կարգավորմանը», - ասել է Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխ-խոսնակը, հաղորդում է «Նովոստի-Արմենիան»:


«Նախիջևանի վիճագրական ժա-ռանգությունը» շարքի երկրորդ հա-տորում, որը նվիրված է Ազուլիս քա-ղաքին, ներկայացված են շուրջ 750 վիճագրություններ, 1200-ից ավելի լուսանկարներ և զժազրեր:

մշակույթը, նիստուկացը, Գողթնի աչքառու տոհմերի մասին համառոտ ակնարկներ և պատմավավերագրա-կան փաստաթղթեր: «Կրքում գե-տեղված ավելի քան 600 պատմավե-րագրական լուսանկարների մեծ մասը հրապարակվում է առաջին անգամ», - նշեց Ա. Այվազյանը: Ինչպես նշեց Ամերիկյան համալսարանի հայ դասա-կան մատենագրության թվային գրա-

դարանի տնօրեն Մերուժան Կարա-պետյանը, «Նախիջևանի պատմու-թյան վկայախոսությունների պատ-կերացույց»-ը Նախիջևանի պատմա-կան և ճարտարապետական, հնագի-տական և նյութական մշակույթի այլևայլ հուշարձանների, պատմական բնակավայրերի պատկերացույց-քար-տեղ է՝ ավելի քան 150 հուշարձան-ների պատկերացույցներով:

Հրիսաաարդական էգ

Էջի պատասխանատու՝ Ս. Հայրապետյան



ՈՒՐ ԵՆՔ ԳՆՈՒՄ

հնչ-որ մեկը մղկտում է: Նրա խոր հառաչանքները լսվում են հեռու-մոտիկից: Նա հիվանդ է: Ջերմությունն այնքան է բարձրացել, որ չի լինի անգամ նրան դիպչել:

Նա՛ մեր հանրածանոթ, հնամ-յա մոլորակն է, կենդանուկն ու ծերացած: Նա, որ դարեր շարունակ ամեն մի վերք վերցնելով, ավելի ջրտեղիված է ամուր, դեռ փորձում է դիմադել նորանոր հարվածների, բայց ավա՛ղ, կարծես էլ չի համբերում, հոգնել է:

Ամեն մի անկյունից հեծեծանքի ձայն է լսվում: Արմատում չլիճիկների ստվերները, անգղերի հետևող աչքերը, մարդուն հանգիստ չեն տալիս: Լճացած գետերի գարշահոտն է բարձրացել ու նեխահոտությունն խանգարում է շնչելը: Գարշելի տեսարանները հիասթափեցնում են մարդուն:

Եվ այսպես, շվարած մնում ես, ո՞ր մի վերքը բուժել, ո՞ր մի խոցը վիրակապել:

Դաժանությունը, սանձարձակությունը, անկանոնությունը, մոլությունը, բռնությունը, անբարոյականությունը, կրոնախախտությունը և... այսպես «մարդը» «մարդու» դիմաց: Ո՞րը կարելի է բուժել...

Եվ այս հսկա, անձայրածիր ու խառնաշփոթ մոլորակի մի անկյունում, ապրում է մեր հնամյա, հայ համայնքը: Մեր անցյալը և մեր ապագան՝ շվարած ու մոլորված երիտասարդը:

Թե ո՞ւր է մեր երիտասարդը, և որտեղ է փնտրում վաղուց կորցրած իր գանձը, ինքն էլ չգիտի: Թե ո՞ւր է ե՛րբ է գտնելու իր ինքնաճանաչման բանալին այդ էլ չգիտի: Նա միայն ինձնում է, որ իրեն հայ են ասում, միայն այդ երեք տառը: Չգիտի թե ինչպես և ինչ տառապանքների գնով է իր ազգը գոյատևել և ինչ դժվարին պայմաններում պահպանել իր կրոնը ու իսկությունը: Եվ չգիտի այն արյան գինը, որ թափվել է ազգը պահպանելու համար: Թեև չի տեսել, բայց գոնե կարող է իր բոլոր հոգով զգալ այդ ամենը, այն շունչը որ ցայժմ հզոր ու կանգուն է պահել իր ժողովրդին:

Սակայն ինչպես կարելի է զգալ այն ամենը, երբ դեռ չգիտես թե ո՞վ ես և որն է քո ինքնությունը:

Ուշադիր եղիր և զգաստ, քանզի անդունդը՝ ազգերի ծուլարանը, միշտ էլ պատրաստ է կլանելու բաց, սակայն չտեսնող աչքերին:

ՍՈՎՈՐԵՅՆԵԼՈՎ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ, ԻՆՔԴ ԷՆ ՍՈՎՈՐԻՐ:

Խորհուրդներ...

Շարժունությունը նպաստում է, արդյոք, միտքի զարգացմանը

Միայն շարժունությունը մեծ արդյունքներ չի տալիս: Եթե դուք ցանկանաք ֆիզիկական վարժությունների միջոցով կես կիլոգրամ մեղմել, ստիպված կլինեք ամբողջ օրը քայլել: Ոսկյա միջինը՝ երկու մեծ թողնի միավորումն է՝ քիչ ուտել, շատ շարժվել: Ֆիզիկական վարժությունները, ակտիվ շարժումները կայծակյին արդյունք չեն տալիս, սակայն որոշ ժամանակ անց դրական փոփոխությունները ակնհայտ կլինեն, կլավանա արյան շրջանառությունը, հատկապես արյան մատակարարումը թոքերին և սրտին, ավելի կակտիվանան նյութափոխանակությունը և գեղձերի գործունեությունը, զգալիորեն լավ կաշխատի մարտոդական համակարգը: Աշխույժ, շարժուն մարդը ժամում մոտավորապես 60 կալորիա ավելի է ծախսում, քան իր դանդաղաշարժ գործակիցը:

Չորսուկը տվեք փորին


Սա խորհուրդ չէ, այլ պահանջ: Այն հաշվի առեք ամեն օրյա մարզալիցքի ժամանակ, համբերատարությամբ կատարելով համապա-

Մտորումներ...



Ամեն օր արթնանալ ու որոշել, որ այսօր սկսելու եմ իմ նախատեսած գործը: Այսպես չի կարելի: Արդեն օրը իր բարիգիշերն է ասում, իսկ ես դեռ անշարժ մնացած,

տասխան վարժությունները: Մեջքի վրա պառկեք հատակին, ձեռքերը բարձրացրեք վերև, ոտքերով հենվեք աթոռի մեջքին: Իրանը թեքեք առաջ՝ ծնկները չծալելով: Մատներով հավեք ոտնաթաթերին, նորից պառկեք հատակին, ձեռքերը վեր: Ոտքերը բարձրացրեք, ծալեք, ապա տարածեք: Պրկելով փորի մկանները, ոտքերը դանդաղորեն իջեցրեք ցած:



Մի պատճառաբանեք, որ ժամանակ չունեք, մի դժգոհեք, որ վարժությունները դժվար են և որ դրանք չեն օգնում: Դա ճիշտ չէ: Վարժությունները երկու շաբաթ կանոնավոր կերպով կատարելուց հետո ձեր ազդրերի շրջագիծը մոտավորապես 4 սանտիմետրով կպակասի:

մտածում թե... Ու այսպես մի օր էլ անցավ:

Երբ կգա այն օրը, որ անհոգ և ազատ կաշկանդող խոհեքից, լուսամուտը կբանամ ու զվարթ և ուրախ կգեղեզնան իմ հին երգը և խոր կշնչեմ այն օրը, որ ինձ է պատկանում ու կբարեկենարակն այնպես, ինչպես որ միշտ էի ցանկանում:

Եվ մի օր զգացի, որ պետք է վերջնական որոշել: Պետք է հաստատական և կենտրոնացած որոշել այն, որն ինձ տանելու է դեպի նպատակներս: Թեև դժվար է, բայց պետք է շտապել ու միանգամայն վերջ դնել բոլոր կասկածներին: Սիլվիա

ԻՆՉ ԵՆ ԳՈՒՇԱԿՈՒՄ ԱՍՏՂԵՐԸ

ԿՈՒՅՍ 23 Օգոստոս-22 Սեպտեմբեր

Այս տարի Կույսերին շատ անակնկալներ են սպասում: Հնարավոր է մասնագիտական վերելք և համընդհանուր ուշադրություն: Չեզոք պահանջվում է միայն պատրաստ լինել դրան և ֆիզիկապես ուժեղ լինել: Սկսեք հետևել ձեզ հենց հունվարից:

Անձնական կյանք. միայնակ Կույսերը տարվա սկզբին սիրային հարաբերություններում անմոռանալի պահեր կապեն: Թեև ոչ ոք ապահովագրված չէ անհաջողություններից, այնուհանդերձ, դուք ընդհանուր առմամբ բողոքելու բան չեք ունենա, հատկապես եթե սիրային հարաբերում գիջող լինեք: Դժվար պահեր կունենաք, եթե

խանդեք սիրելիին, որը չի ուզում ձեզինց կախում ունենալ: Ամուսնացած Կույսերի համար ամեն ինչ անփոփոխ կլինի: Փորձեք խուսափել ավելորդ ծախսերից:

Միայնակ Կույսերը կսիրահարվեն ու թաքուն կերպով ամուսնանալու մասին: Ուժեղ զգացմունքները կհանգեցնեն նրան, որ ամուսնը այլևս չեք զգալի ձեզ, անկեղծորեն կարտահայտեք զգացմունքները:

Մասնագիտական ոլորտ. դուք ուրախությամբ կկատարեք անխուսափելի պարտականությունները՝ ընդունելով դրանք որպես մասնագիտական վերելքի հասնելու միջոց: Տարին բարեհաջող է ձեզ համար: Մասնագիտական ոլորտում ձեզ գործելու լայն հնարավորություն կտրվի: Անձնական գործերը առաջնային մի համարեք, և աշխատանքում հաջողության կհասնեք: Թույլ մի տվեք, որ ոգևորված աշխատելու ձեր ցանկությունը շահագործեն: Տարվա երկրորդ կեսը լավ

ՀԱՖԵՉ

Բանաստեղծների բանաստեղծը...

Այսպես են մեծարում Հաֆեզին պարսիկ գրականագետները:

Բանաստեղծի բուն անունը Շամս-էդ-դին Սոհամմադ է: Ծնվել է Շիրազ քաղաքում: Մի շարք տվյալների համաձայն՝ նա ծնվել է 14-րդ դարի 20-ական թվականներին: Մեծավ մասամբ նրա ծննդյան թիվը համարում են Քր. ծ. թ. 1325 թվականը:

Հաֆեզի ստեղծագործությունների առաջին տպագիր ժողովածուն կամ, ինչպես ընդունված է ասել, «դիվան»-ը լույս է տեսել Կալկատայում 1791 թվականին:

Հաֆեզի կյանքն ու գրական գործունեությունը համընկել է մոտ 12 ինքնակալների տիրապետության: Հաֆեզը օգտվելով անցյալի գրական ժառանգությունից և տիրապետելով ժամանակի մտավոր նվաճումներին կարողացավ հասնել պարսկական գրականության բարձրունքներին և ամենամանր պայմաններում կերտեց աշխարհի ամենագեղեցիկ գազելները(2), որոնց մեջ նա զարմանալի վարպետությամբ սիրու և գինու երգերին հյուսեց իր մռայլ և դաժան ժամանակի անցուդարձի պատկերները, իր զգայուն սրտի դառնությունն ու գայրուքը և լավագույն կյանքի երագներն ու իղձերը:

Նրա գազելների նյութը ընդհանուր առմամբ պտտվում է սիրո, գինու, բնության և կյանքի հաճույքների շուրջ: Հաֆեզը վերոհիշյալ թեմաներին հարակից իր գազելների մեջ մտցրեց նոր թեմաներ գլխավորապես՝ օրվա հրատապ հարցեր, քաղաքական կյանքի անցուդարձ, փիլիսոփայական մտորումներ կրոնաբարոյական հարցերի շուրջ, բողոք անարդարության, կրոնական նեղմտության և կեղծիքի դեմ և ուրիշ բազմաթիվ առօրյա և մարդկային միտքը հուզող խնդիրներ:

Պարսիկ դասական գրականության մեջ հազիվ թե գտնվի մի այլ բանաստեղծ, որ երևան բերած լինի այնքան կուռ և արմատական ինքնուրույնություն, որքան Հաֆեզը:



Հաֆեզի դամբարանը

Իրանի ժողովուրդը միշտ էլ մեծ հարգանքով է հիշել Հաֆեզին և ավելորդ չի լինի ասել, որ նրա «դիվանը» երկրում ամենատարածված գիրքն է:

Իրանի ժողովուրդը դարեր շարունակ դիմել է Հաֆեզի «դիվանին», բախտագուշակության համար, նամանականդ իրանական նոր տարվան (Սովետիկ) և ծննդնամուտին:

Հաֆեզի ստեղծագործություններում դեռ շատ մտք կետեր կան, որ սպասում են լուսաբանության:

1-Գազել- Լիրիկական կամ քնարեգական, «սիրերգ» կամ «տաղերգ»:
2-Ռեզե-Քառյակ խորամանկ, Հաֆեզի մոտ՝ ազատամիտ:

Սիրունների սիրուց բացի սիրտս ուրիշ կողմ չի թեքվում

Սիրունների սիրուց բացի սիրտս ուրիշ կողմ չի թեքվում, Որքան նրան խոսք են ասում, խրատ կարդում՝ ուշք չի դարձնում:

Աստված սիրես, քարոզ տվող, գինուց ասա, թասից խոսիր-Մեր սեսիլքում, դրանցից լավ, ոչ մի պատկեր չի երեւում:

Օ~, վարդերես, սիրուն սաղի, կարմիր գինին բեր սեղանին, Մեր գլուխը դրանից լավ մի ուրիշ միտք չի մտորում:

Գինու կուլան թեքվիս տակին... կարծում են, թե գիրք են տանում... Չարմանում են, ապա ինչո՞ւ այս կեղծիքը ինձ չի խանձում:

Այս ցնցոտի քուրծը մի օր կրակ կտամ ու կազատվեմ.- Գինեվաճառ ծերուկի մոտ սա մի թաս էլ չի արժենում...

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

Հետաքրքիր պատմություն ունեն ձեռնոցները: Ամենահին ձեռնոցները հայտնաբերվել են եգիպտական փարավոն թուրան-համոնի դամբարանում (մահացել է 1350 թ. մ.թ.ա.): Այդ ձեռնոցները եղել են կտավից և պաշտպանել են միայն մատները, մի բան, որ վկայում է նրանց ձևական բնույթի մասին:

Այդ ժամանակաշրջանի ձեռնոցների դերի մասին կարելի է զգալափար կազմել այն հետաքրքիր դեպքից, երբ հին Պարսկաստանի Կյուրոս թագավորը հրամայել է պատժել իր հարազատներին միայն այն բանի համար, որ նրանք համարձակվել են մերկ ձեռքերով ներկայանալ իրեն՝ չհագնելով ձեռնոցներ, ինչպես ընդունված էր այն ժամանակ: Հույների մոտ ձեռնոցներն ունեցել են պաշտոնական դեր: Հռոմեացիների մոտ ձեռնոցները մի այլ դեր են կատարել: Նրանք ձեռնոցներից օգտվել են ուտելու ժամանակ, քանի պատառաբաղն անձանոթ է եղել նրանց:

Ձեռնոցները լայն տարածում ստացան միայն 16-րդ դարից, երբ սկսեցին նոր մեթոդով կաշիների դաբաղումը: Երկար ժամանակ ձեռնոցներն առանձին փոփոխությունների չեն ենթարկվել:



Վարորդները հավաքվել էին և իրենց քաջագործություններից էին պատմում: Առաջինն ասաց.

- Երբ 150 կիլոմետր արագությամբ քշում էի ոստիկանը չկարողացավ ինձ բռնել:

Նույն պահին մի օդանավ այդտեղից անցավ, իսկույն մի ուրիշ վարորդ բացականչելով ասաց.

- Սիա հիմա հասավ օդանավը,

որի հետ միասնաբար մեկ ժամ առաջ ճամբա ելանք...:

Շարադրության նյութն է՝ «Եթե միլիոնատեր լինեիր», Աշակերտներից միակ Արմենը ձեռքերը ծալած նստած է:

-Արմեն, ինչո՞ւ չես սկսում:
- Սպասում եմ, որ քարտուղարուհի գա:

اخبار کوتاه

«**چراغ‌ها را من خاموش می‌کنم**»، به ارمنستان نمی‌رود

